

ԿՐՕՆԱԿԱՆ

«Ինչ օգուտ, եթե մարդ այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորսնցնե՞լ»:

(Մատթ. 16:26)

Ինչ ալ ընենք կեանքի մէջ, ինչ դիրքի ալ հասնինք, ինչ հարստութեան ալ տիրանանք, եթէ զԱստուած դուրս թողունք մեր կեանքէն, ժամանակը կու գայ և պիտի տեսնինք թէ իսկապէս «ամենայն ինչ ընդունայն է», բացարձակապէս ոչինչ, որուն համար ալ Քրիստոս պիտի ըսէր.

Մարդ արարածը բնութեամբ շահարկող է, վաճառականական մտքի տէր. ան միշտ կ'ուզէ շահիլ և դիզել իր ունեցածէն աւելի, և տարուած այս մտահոգութենէն, ան աւելի հետամուտ կ'ըլլայ նոր միջոցներ և ձեւեր գտնելու, պարզապէս իր այսպէս ըսած, «յարգելի ու բարձր դիրքը պահելու», կամ ճիշդ բառը գործածելով՝ հարստանալու: Այս օրերուս, մարդկութեան մեծ մասը իր կեանքի միակ նպատակակէտը ըրած է դրամ դիզել, տէր դառնալ այլ և այլ հարստութեանց, կալուածներու, գործատեղերու և ուրիշ միջոցներու, մինչ անդին կան նաեւ ուրիշներ, որոնց հետաքրքրութիւնը կը դառնայ աւելի մտաւորական, հոգեւոր և կրօնական հարցերու շուրջ, բաներ՝ որոնց ներկայ ընկերային շրջանականներու մէջ սակաւաթիւ անձեր կը մօտենան դրականօրէն, առանց նախապաշարումներու և յետին նպատակներու:

Սակայն ի՞նչ է իրականութեան մէջ Մատթէոսի Աւետարանէն առնուած բնաբանին պատգամը, ի՞նչ է բուն իմաստը «շահիլ» կամ «օգտուիլ» բառերուն, եթէ ոչ արդէն ունեցած հարստութիւնը տասնապատկել և կամ հարիւրապատկել: Ու հոս հարցում մը կը ծագի մեր միտքերուն մէջ, իսկ ո՞վ պիտի ըլլայ օգտուողը այս շահարկումներէն, եթէ ոչ նոյնինքն շահարկողը, ան՝ որ այնքան ճիգ և ժամանակ կը թափէ աւելցնելու արդէն իր ունեցածը: Եւ արդէն ի՞նչ էր Քրիստոսի ըսել ուզածը, թէ

Ա.- Ան որ հոգին կը կորսնցէր, արդէն ոչինչ շահած կ'ըլլար:

Բ.- Կարեւոր չէր թէ տուեալ անձը, ենթական որքան կը շահէր:

Գ.- Եւ երբ մէկը մեռնէր առանց Աստուծոյ, արդէն ամէն ինչ կորսնցուցած կ'ըլլար:

Այսօրուան բնաբանով, Աստուածորդին մարդկութիւնը կը դնէր երկու մեծ գանձերու ընտրութեան առաջ, առաջինը՝ հաւանականութիւնը տիրանալու աշխարհին կամ աշխարհիկին, անոր ամբողջ աներեւակայելի հարստութիւններուն՝ ոյժով, ինչպէս նաեւ կարողութիւնը՝ իրականացնելու իր բոլոր երազներն ու իղձերը: Իսկ երկրորդը՝ մեր առաջ կը բանայ կարելիութիւնը դառնալու կատարեալ մարդ արարած մը, անթերի նկարագրով և իմաստութեամբ, և մաքուր խիղճով, մէկը՝ որ հաշտ կ'ապրի Հայր Աստուծոյ, և ներդաշնակ մարդոց ու ինքն իր անձին հետ: Առաջին գանձը նիւթական է ու շօշափելի, բան մը որ կրնանք տեսնել, չափել և կշռել, երկրորդը՝ ներքին է և հոգեւոր, որ աներեւոյթ է, անչափ և անհաշիւ:

Կ'ըսուի թէ, երբ Ֆրանսայի կայսր՝ Շառլըմէյն կը մեռնի, զինք կը թաղեն իր արքայական զգեստներով, նստած իր գահին վրայ, բաց Աստուածաշունչ մը ծունկերուն, իսկ ցուցամատը՝ Մատթէոսի Աւետարանի հետեւեալ հատուածին վրայ. «Ի՞նչ օգուտ եթէ մարդ այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորսնցնէ»: Որովհետեւ, մեր հոգիները պահ չեն դրուած մեր մարմիններուն մէջ միայն կիրականօրեայ արա-

րողություններուն մասնակցելով «փրկուելու», մինչ արտաքին մեր մարմինը կը մընայ հողեղէն և խոցելի: Մեր հոգին մեր «Ես»-ն է, մեր անհատականությունը: Ի՞նչ օգուտ դրամատուներու մէջ մեր ունեցած միլիոնները, եթէ կորսնցուցած ենք մեր առողջությունը, մեր ընտանեկան անդորրությունը: Ի՞նչ օգուտ, եթէ մարդ արձանագրէ քաղաքական յաղթանակներ, և կամ ընկերային շրջանակներու մէջ արժանանայ մեծ յարգանքի ու պատիւի, սակայն կորսցնէ իր մերձաւորներուն և բարեկամներուն մօտ վայելած սէրը, պատիւն ու յարգանքը: Մինչ անդին մենք ունինք մեր ներքին «Ես»-ը, և թող երբեք մեր միտքէն չհանենք Վերջին Դատաստանի մը գոյությունը, ուր պիտի դատուինք ո՛չ թէ մեր ֆիզիքական կամ մտային կարողություններուն համար, որովհետեւ մեր իրաւ «Ես»-ը նիւթական և քաղաքական տգեղ խաղերուն համար պիտի ըսէ. «Այս մէկը ես չեմ»: Ի՞նչ կրնայ տալ մարդ արարածը եթէ կորսնցուցած է իր իրաւ «Ես»-ը, բացարձակապէս ոչինչ, որովհետեւ ան արդէն ծախած է իր մէջ գտնուող ամենադրականն ու բարին, և փոխարէն ստացած ոչինչ: Ի՞նչ իմաստ պիտի ունենար ընդլայնել սահմանները մեր աշխարհիկ ստացուածքներուն, հարստութեան եթէ պիտի շարունակենք անտեսել էականը՝ հոգին: Ի՞նչ է մեր շահը եթէ հարստութեան և ոյժի ամբարումը մեզ պիտի վերածէ անհոգի, անզգայ, վախկոտ և ճղճիմ անձերու: Միթէ կ'արժէ՞ փճացնել ամբողջ կեանք մը հարստանալու համար եթէ անդին պիտի կորսնցնենք մեր հոգին և գերի դառնանք նիւթին: Անշուշտ պատասխանը որոշ է ու յստակ. անիմաստ պիտի ըլլար շահիլ ամբողջ աշխարհ մը, իսկ անդին կորսնցնել միակ իմաստ ու արժէք ունեցող բանը՝ հոգին, որովհետեւ ի վերջոյ հոգին է կենդանարար: Վերջին, ահեղ Դատաստանի օրը ոյժն ու հարստությունը, փառքն ու դիրքը ո՛չ մէկ նշանակություն պիտի ունենան, միակ արժէքաւոր բանը պիտի ըլլայ հոգին:

Իր պատմութեան մէկուն մէջ «Մարդ ո՞րքան հողի կարիք ունի», Թուլսթոյ կը խօսի հարուստ երկրագործի մը մասին, որ երբեք չէր գոհանար իր ունեցածով, ան միշտ կը ձգտէր աւելիին: Օր մը ան կը ստանայ անսովոր առաջարկ մը, 1000 ռուպլիի ան պիտի կարենար ունենալ այնքան հող որ կարենար քալել մէկ օրուան մէջ: Միակ պայմանը այն էր, որ ան պարտ էր արշալոյսին այնտեղէն որ սկսէր քալել, մայրամուտին պէտք էր նոյն տեղը գտնուիլ: Յաջորդ առաւօտ, արշալոյսին ան կը սկսի քալել շատ արագ, առանց երբեք կանգ առնելու: Օրուայ ընթացքին բաւական հեռացած ըլլալուն, վերադարձին կը սկսի վազել չափազանց արագ, որպէսզի մայրամուտին հասնէր իր մեկնակէտին: Իր մեկնման կէտը: Սակայն հազիւ հասած, ան շնչահեղձ կ'իյնայ ու կ'աւանդէ հոգին: Իր ծառաները կը փորեն անոր գերեզմանը, որ ... երկու մեթրով-մէկ մեթր տարածք մը ունէր միայն:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, որուն հիմերը դրաւ ինք՝ Աստուածորդին, և ապա մեր առաքելաշաւիղ հայրապետներ քար առ քար կերտեցին ամբողջ Քրիստոնէութեան փառքը հանդիսացող Ս. Էջմիածնի Կաթողիկէն, դարեր շարունակ մնաց լուսաւոր Փարոսը հայ ժողովուրդին, մանաւանդ աշխարհասփիւռ հայերուն, և Մայր Աթոռի Հայրապետները միշտ գիտցան գերադասել հոգին աւելի քան աշխարհն ու աշխարհիկը, որովհետեւ անոնք գիտէին թէ մարմինը, նիւթը ժամանակաւոր են և չէին կրնար օգնել իրենց: Եւ այդ սուրբ հայրապետներու հոյլն էր, որ գիտցաւ մեր պատմութեան տարուբերող ծովուն մէջէն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը անփորձ և անվտանգ հասցնել 21-րդ դար, որովհետեւ բուռն հաւատացեալներ էին Աւետարանի խօսքին.

«Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ»: